ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 10 *«01» նոյեմբեր 2019 թ.*

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 93

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 10 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2019 թվականի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ին դիմելու մասին:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.			
Լևոնյան Վ.			
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 10 *«01» նոյեմբեր 2019 թ.*

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 94

«ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-ԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչների առաջարկությունները՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Մ2 – Գետափ ավտոճանապարհի կմ 0+000 - կմ 2+100 վերականգնվող ճանապարհահատվածի վերաբերյալ առաջարկություններով՝ դիմել «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ին:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.			
Լևոնյան Վ.			
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

«01» նոյեմբեր 2019 թ.

«ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՔՐԻՍՏԻՆԵ ՂԱԼԵՉՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ղալեչյան

Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում 2019 թվականի հոկտեմբերի 24-ին՝ համայնքի ղեկավարի, Գետափ բնակավայրի վարչական ղեկավարի, համայնքի ավագանու անդամների և մի խումբ բնակիչների մասնակցությամբ, տեղի ունեցավ հանրային քննարկում՝ «ՏԾԻԿ» ՊՈԱԿ-ի կողմից, Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի շրջանակներում Մ2 – Գետափ ավտոճանապարհի կմ 0+000 - կմ 2+100 վերականգնվող ճանապարհահատվածի վերաբերյալ:

Խնդիրը կայանում է նրանում, որ վերը նշված գոյություն ունեցող ճանապարհի /դեպի մանկապարտեզ իջատեղ 0+020 ՊԿ-ից մինչև 0+400 ՊԿ-ի ճանապարհահատված/ հողային պաստառի ընդհանուր լայնությունը չի ապահովում երկկողմանի ճանապարհի համար անհրաժեշտ չափանիշները: Գոյություն ունեցող ճանապարհի լայնությունը 5.6-6.5 մ է: Եթե նախագծով և՛ մայթ, և՛ վաք, և՛ կողնակ կառուցվի, ապա ճանապարհի երթևեկելի մասի լայնությունը չափազանց կփոքրանա՝ դառնալով 4-4.5 մ, իսկ մի քանի ՊԿ-երում նույնիսկ 4 մ չի ապահովում:

Եթե նշված նախագծով մայթը կառուցվի գոյություն ունեցող ճանապարհի արևմտյան կողմում, ապա ոչ միայն ճանապարհի երթևեկելի գոտու լայնությունը չի ապահովվի երկկողմանի երթևեկության համար, այլև ավտոմեքենաների երթևեկությունը 1.5 մ-ի չափով տեղափոխվելու է դեպի գոյություն ունեցող ճանապարհի արևելյան կողմ, որտեղ ճանապարհի եզրը լանջիվայր թեքություն ունի: Նշված հատվածում բեռնատար մեքենաների երթևեկի և միևնույն ժամանակ ճանապարհի կողնակի մասում գրունտային ջրերի հոսքի հետևանքով՝ ճանապարհի նստվածքի, սողանքի և փլուզման վտանգ կա:

Հիմք ընդունելով՝ խնդրի լուծման վերաբերյալ տարածքին լավատեղյակ բնակիչների կարծիքները, ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները.

1) Ճանապարհը 1-1.5 մ-ով լայնացնելու համար՝ արևելյան կողմում կառուցվի հենապատ, ինչի արդյունքում կկանխվեն հնարավոր սողանքները, ինչպես նաև երթևեկության անվտանգությունը ապահովելու և հետիոտնի համար նախատեսված մայթը կառուցելու համար անհրաժեշտ է 0+260 ՊԿ-ից 0+335 ՊԿ, 0+85 - 0+160 ՊԿ-երում, 0+180 - 0+210 ՊԿ, 0+365 - 0+400 ՊԿ-երում հենապատ կառուցել: Գոյություն ունեցող ճանապարհի արևելյան կողմի լանջին հենապատ կառուցելու համար տեղանքը նպաստավոր է՝ ճանապարհի եզրից 1 – ից 2.5 մ հետո 1 մ լայնությամբ հարթակ (պոլկա) կա: Նշված հատվածների հողակտորների սեփականատերերը տվել են գրավոր համաձայնություն՝ իրենց հողատարածքներին կից հենապատ կառուցելու համար /համաձայնագրերը կցվում են/:

Մայթն արևելյան կողմ տեղափոխելու հիմնավորումը այն է, որ գոյություն ունեցող ճանապարհի նախագծով նախատեսված տեղում /ճանապարհի արևմտյան կողմ/, որտեղ մայթ պետք է կառուցվի, բնակիչների տնամերձ հողամասերը մայթից 1 մ բարձր դիրքում են, մեծամասսամբ չունեն հենապատ, մայթը կառուցելուց հետո հողի և ոռոգման ջրի թափվելու վտանգ է լինելու դեպի մայթ և այդ կողմում մայթը չի ծառայի իր նպատակին: Առաջարկում ենք՝ վաքերը հնարավորին չափով տանել դեպի ճանապարհի արևմտյան կողմ՝ բնակիչների սահմանին կից ճանապարհի եզր, որպեսզի հնարավորինս ճանապարհի լայնությունն ապահովվի, իսկ մայթը կառուցվի մեր կողմից առաջարկված գոյություն ունեցող ճանապարհի արևելյան կողմում հենապատ կառուցելուց հետո: Միևնույն ժամանակ ճանապարհի այդ հատվածում մայթ կառուցելու դեպքում ծանրաբեռնվածություն չի լինի և սողանքի ու փլուզման վտանգն էլ կկանխվի:

2) Հետիոտնային անվտանգությունը ապահովելու համար՝ 0+380, 0+300 և 0+240 ՊԿ-երում արհեստական անհարթությունների քանակն ավելացնել, իսկ 000+2+100 ՊԿ-ից Մ-10 ճանապարհի հետ հատման գոտում՝ Սևան-Մարտունի-Գետափ ավտոճանապարհի 123-րդ կմ-ի վրա գոյություն ունեցող հետիոտնային անցման համար նախատեսված շերտագծերի վրա արհեստական անհարթություն կառուցել և կահավորել այդ ճանապարհի նորմերով սահմանված նշաններով, քանի որ այդ ճանապարհով երթևեկող մեքենաները սահմանված արագությունից արագ են ընթանում և վտանգ են ներկայացնում հետիոտնային անցումով անցնող մանկապարտեզ և դպրոց հաճախող երեխաների համար: Անվտանգ անցումը ապահովելու համար առաջնային անհրաժեշտություն է վերը նշված տեղում արհեստական անհարթություն կառուցել: Նշված հատվածում արհեստական անհարթություն կառուցելու համար, 2018 թվականին, առաջարկություն ենք ստացել նաև ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից /կցվում է/:

3) Քանի որ Գետափի մանկապարտեզը չունի մարդկանց համար դեպի մանկապարտեզի բակ մուտք ու ելքի ճանապարհ՝ վերականգնվող ճանապարհահատվածի դեպի մանկապարտեզ իջատեղի 0+444 կմ-ից մինչև 0+470 կմ ՊԿ-երում նախատեսված բաց վաքերը՝ 0+444 կմ-ից մինչև 0+465 կմ ՊԿ-երում փոխարինել փակ վաքերով, որը միաժամանակ կարող է ծառայել նաև մայթ, իսկ ճանապարհի 0+458 - 0+460 ՊԿ-երում հետիոտնային անցման աստիճաններով ելք ու մուտք կառուցել դեպի մանկապարտեզ:

4) Դեպի մանկապարտեզ իջատեղի 0+270 կմ ՊԿ-ում գոյություն ունեցող ջրահեռացման կամրջի արևելյան կողմում ճանապարհը չափազանց նեղ է, երթևեկելի մասի լայնությունը 3 մ է: Այդ կողմում ճանապարհի երթևեկելի մասի լայնությունը ապահովելու համար անհրաժեշտ է հենապատ կառուցել: Նախկինում այդ հատվածում նախատեսված է եղել հենապատ կառուցելու, սակայն, բնակչի համաձայնությունը չի եղել, ներկայումս բնակիչը տվել է իր գրավոր համաձայնություն, որ իր հողակտորի ճանապարհի այդ հատվածում հենապատ կառուցվի և ճանապարհը լայնացվի /համաձայնագիրը կցվում է/: Նշված տեղում, առանց խողովակի, բնակչի պատի միջով, գոյություն ունեցող կամրջի տակով, ոռոգման ջուր է տարվում դեպի հարավ և դեպի հյուսիս՝ թվով 4 տնտեսության գյուղատնտեսական նշանակության հողերը, այգիները ջրելու համար: Առաջարկում ենք՝ d=0.325 մ 9 մ մետաղական խողովակ անցկացնել, այնուհետև աջ և ձախ կողմերից d=0.159 մ յուրաքանչյուր կողմում 7 մ երկարությամբ մետաղյա խողովակ զոդել և այդ խողովակները անցկացնել նախատեսվող հենապատի միջով բնակիչներին ոռոգման ջրով ապահովելու համար, իսկ ճանապարհի մակերեսային ջրահեռացման ջրերի համար 0.270 կմ ՊԿ-ում նախատեսվող մետաղական d=0.53 մ խողովակը չդրվի, քանի որ այդ մակերևույթային ջրահեռացման ջրերը վնաս կպատճառեն իրենց հողերին, իսկ վաքը շարունակվի՝ նշված հատվածում ոռոգման խողովակ տեղադրվի:

5) 1+920 ՊԿ-ից 1+973 ՊԿ ճանապարհահատվածում տեղադրված նոր վաքերը մոտ 1 մ-ի չափով ճանապարհի նախկին երթևեկելի գոտում են: Մ-10 ճանապարհից դեպի բնակավայրի մուտք գործող ճանապարհի 2+000 ՊԿ-ից դեպի 1+980 ՊԿ 90 աստիճան շրջադարձ ունի, նախկինում այդ հատվածում եղել են վթարներ և վթարային իրավիճակներ /հատկապես ձմռանը ավտոմեքենաները կտրուկ շրջադարձի ժամանակ սահելու են և մեքենայի անվադողերը ընկնելու են վաքի մեջ/, իսկ երկար քարշակով բեռնատար մեքենաները նշված հատվածում չեն կարող շրջադարձ կատարել: 1+920-ից մինչև 1+973 ՊԿ բնակչի սահմանազատող գոյություն ունեցող հենապատերից մինչև տեղադրված նոր վաքերի մայթի կողմի եզրը եղած հեռավորությունը 3-ից 4 մետր և ավելի է: Առաջարկում ենք վերը նշված հատվածում վաքերը և մայթը 0.8-1 մ-ի չափով տեղափոխել դեպի ձախ, գոյություն ունեցող հենապատի ուղղությամբ՝ այդ հատվածում երթևեկության անվտանգությունը ապահովելու համար:
6) Ճանապարհահատվածի մի շարք՝ 1+076 կմ, 1+212 կմ, 1+193 կմ, 1+490 կմ, 1+431 կմ ՊԿ-երում ոռոգման ջրագծեր անցկացնել՝ համապատասխանաբար d=0.219 մ, d=0.219 մ, d=0.159 մ, d=0.219 մ, d=0.159 մ մետաղական խողովակներով՝ բնակիչներին ոռոգման ջրով ապահովելու համար:
7) Մի շարք ՊԿ-երում, ճանապարհի հողային պաստառի տակով լայնությամբ անցկացված գոյություն ունեցող ջրագծերի խողովակները /մետաղական, բետոնյա և ազբեստյա / 0+966.48 կմ d=0.219մ, 1+117 կմ d=0.159մ, 1+165.15 d=0.219 մ, 1+860.7 փոխարինել d=0.219մ 1+902.64 կմ d=0.219մ 1+746կմ ՊԿ-ում d=0.219մ, 1+1745կմ ՊԿ-ում d=0.219մ մետաղական խողովակներով:
8) Կառուցվող վաքերի վրայով դեպի տների բակ ավտոմեքենաների և մարդկանց ելքն ու մուտքն ապահովելու համար՝ 0+950 կմ-ից մինչև 0+957կմ և 1+1500 կմ-ից մինչև 1+1507կմ ՊԿ-երում անհրաժեշտ է մետաղական խողովակներ, կամ վաքերի վրա մետաղական ջրընդունիչ ցանցեր տեղադրել:
9) 1+000 ՊԿ-ում նախկինում տեղադրված հեռախոսակապի հենասյունը գտնվում է վաքի համար նախատեսված հողային պաստառի կենտրոնում: Վաքերը տեղադրվել են հենասյան առջևից /0+980-ից մինչև 1+020 ՊԿ-երում, բայց վաքի կողքերի ամրացման համար հող դեռ չի լցվել, ուստի, հնարավոր է առանց վաքը վնասելու աջ ու ձախ տեղաշարժել: Հարթ տեղանքում 0+980-ից մինչև 1+020 ՊԿ-երում վաքերը աղեղնաձև թեքվել են դեպի ճանապարհի երթևեկելի գոտի: Առաջարկում ենք՝ տեղափոխել 1+000 ՊԿ-ի հենասյունը 0.4 մ դեպի արևմուտք և վաքերը ուղիղ գծով ուղղել:
10) Դեպի մանկապարտեզ իջատեղի 0+437 կմ ՊԿ-ից մինչև 0+444 կմ ՊԿ տեղադրել ջրընդունիչ խողովակ՝ դեպի մանկապարտեզ ավտոմեքենաների մուտքի ու ելքի համար նախատեսված դարպասի առջև, քանի որ մանկապարտեզի բակի ասֆալտապատ տարածքում /մոտ 700քմ/ տեղումների ժամանակ հավաքված մեծ քանակությամբ ջրերը հոսում են նշված դարպասի տակից դեպի ճանապարհ, իսկ ջրընդունիչ խողովակից հետո՝ 0+437 ՊԿ-ում կառուցել դիտահոր, որի մեջ ներկառուցել ոռոգման ջրատար խողովակ բնակչի համար և առանձին ջրահեռացման d=0.219մ 0+437 ՊԿ-ից փակ խողովակով տարվի դեպի վաք 0+400 ՊԿ:
11) 1+920 ՊԿ-ից մինչև 1+973 ՊԿ-երում և դեպի մանկապարտեզ իջատեղ 0+10 կմ մինչև 0+60 ՊԿ-երում վաքերի վրա ջրընդունիչ ցանցեր տեղադրել, քանի որ ձմռանը այդ հատվածներում մեքենաները շրջադարձի ժամանակ սահելու են և անվադողերը ընկնելու են վաքի մեջ:
12) 1+1545 կմ ՊԿ-ից դեպի իջատեղ 21-րդ փողոցի մուտքային ճանապարհի լայնությամբ նախատեսված d=0.273մ մետաղական փակ խողովակը փոխվի ջրընդունիչ

խողովակով՝ կենտրոնական ճանապարհից մակերեսային ջրերի հոսքը դեպ 21-րդ փողոց կանխելու համար:

13) 1+548 ՊԿ-ից մինչև 1+598 ՊԿ-երում նախագծով նախատեսված մայթի լայնությունը բնակավայրի կենտրոնական հրապարակում 1.5 մ-ի չափով փոքրացնել՝ տանելով դեպի աջ: Բնակավայրի կենտրոնական հրապարակում 1.5 մ-ով մայթի լայնության փոքրացումը անհրաժեշտ է երթևեկության անվտանգության համար և բնակավայրի շահերի ապահովման համար /միջոցառումների ժամանակ հրապարակի մակերեսի պահպանման համար/:

14) 0+890կմ ՊԿ-ից մինչև 1+030 կմ ՊԿ մայթ կառուցել, քանի որ նախագծով վերոնշյալ հատվածում մայթ նախատեսված չէ, իսկ այդ հատվածում կա երկու փողոց /17 փողոց, փկղ 8 և 20-րդ փողոցը/՝ ընդհանուր թվով 14 տուն:

15) 0+317կմ ՊԿ-ից մինչև 0+710 ՊԿ տեղադրվի վաք կամ մետաղական կիսախողովակ՝ ճանապարհի մակերևութային ջրերի հոսքի՝ ջրահեռացման առվից դեպի ճանապարհի գրունտային շերտ, վտանգը կանխելու համար:

Կից ներկայացնում ենք Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչների կողմից թվարկված առաջարկությունների իրականացման համար ներկայացված համաձայնագրերը և հիմնավորումները:

Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչների և մեր անունից խնդրում ենք՝ հիմք ընդունելով Մ2- Գետափ ավտոճանապարհի կմ 0+000 – կմ 2+100 վերականգնվող հատվածի վերաբերյալ թվարկված առաջարկությունները, նախագծանախահաշվային փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություններ:

Գլաձոր համայնքի ավագանու անդամներ՝

Ա. Գաբրիելյան

Ք. Գասպարյան

Ա. Գևորգյան

Վ. Լևոնյան

Կ. Մանասերյան

Ա. Մարգարյան

Գ. Մարգարյան

Մ. Մարտիրոսյան

Է. Սարգսյան

Ե. Սաֆարյան

Գ. Վարդանյան